ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Էդուարդ Մարտիրոսյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրեն

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա, 2025թ. հուլիսի 31-ից օգոստոսի 2-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   «Ռոսատոմ Սերվիս» բաժնետիրական ընկերություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն Համատեղ համակարգման կոմիտեի (ՀՀԿ) 3-րդ նիստին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Կողմերը քննարկել են Համատեղ համակարգման կոմիտեի (ՀՀԿ) №2 արձանագրության որոշումների կատարումը, Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման նախագծի (ՇԺԵ-2) աշխատանքների իրականացման կարգավիճակը 2025 թվականի դրությամբ և ՇԺԵ-2 նախագծի շրջանակներում 2026 թվականին կատարվելիք աշխատանքների վերաբերյալ ծրագրերը (պլանները):

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   «Ռոսատոմ» պետական կորպորացիայում կայանալիք պաշտոնական խորհրդակցության նախօրեին՝ հուլիսի 31-ին, իմ նախաձեռնությամբ հյուրանոցի սրահներից մեկում տեղի ունեցավ ոչ ֆորմալ հանդիպում ռուսական կողմի ներկայացուցիչների հետ՝ քննարկելու խորհրդակցության ընթացքում ներկայացվելիք սահիկաշարը՝ ՀՀ կառավարության 2025թ. հունիսի 20-ի «ՀՀ կառավարության 2023թ. սեպտեմբերի 14-ի N1597-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N819-Ա որոշման հավելվածով հաստատված աշխատանքային պլանի վերաբերյալ: Հանդիպմանը ներկա էին «Ռոսատոմ Սերվիս» ԲԸ գլխավոր տնօրեն Եվգենի Սալկովը, «Ռոսատոմ Սերվիս» ԲԸ համալիր նախագծերի կառավարման գծով տնօրեն Յուրի Սվիրիդենկոն, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանը, ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահի պ/կ Խաչատուր Խաչիկյանը, ՀՀ ՄԱԿ կոմիտեի Ռեակտորների անվտանգության բաժնի պետ-պետական տեսուչ Արմեն Թադևոսյանը: Կատարվեցին սահիկաշարի որոշ տվյալների

փոփոխություններ, և կրկին քննարկվեցին ՀՀ կառավարության 2025թ. հունիսի 20-ի «ՀՀ կառավարության 2023թ. սեպտեմբերի 14-ի N1597-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N819-Ա որոշման պահանջները՝ ընդգծելով սահմանված ժամկետների պահպանման կարևորությունը:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 1-ին, կայացավ Համակարգման կոմիտեի 3-րդ նիստը, որին մասնակցում էին «Ռոսատոմ» պետկորպորացիայի կազմում ընդգրկված ընկերությունների ու ՌԴ այլ ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչներ և հայկական պատվիրակությունը, որը ներկայացնում էին ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ղեկավար անձինք:

Ողջույնի խոսքով հանդես եկան «Ռոսատոմ» պետկորպորացիայի գլխավոր տնօրենի տեղակալ – միջազգային գործունեության բլոկի տնօրեն Նիկոլայ Սպասսկին, ով գլխավորում էր ռուսական պատվիրակությունը, և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանը, ով գլխավորում էր ՀՀ պատվիրակությունը:

Իմ ելույթի ընթացքում ներկայացրի ՇԺԵ-2 ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքներն՝ ընդգծելով ռուսական կողմի հետ համագործակցության կարևորությունը: Կրկին ընդգծեցի, որ որոշ կետերով ժամկետների հետ կապված կան անհամապատասխանություններ՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2025թ. հունիսի 20-ի N819-Ա որոշման հավելվածով հաստատված կատարման պլանի ժամկետները, ինչին ռուսական կողմը շտկումներ մտցրեց:

Ե. Սալկովը ներկայացրեց աշխատանքների մանրամասն նկարագիր, որն ընդունելի էր հայկական պատվիրակության համար: Սպասսկին կրկին հավաստիացրեց, որ ժամկետների խախտումներ չեն լինի, և 2026 թվականին շահագործման ժամկետի երկարացման միջոցառումները, որոնք գտնվում են ռուսական տիրույթում, կկատարվեն ամբողջ ծավալով և ժամանակին:

Ռուսական կողմը նաև անդրադարձավ նոր ատոմային էլեկտրակայանի կառուցման հարցին՝ կրկնելով այն առաջարկը, որը ներկայացվել էր ՀՀԿ 2-րդ նիստի ընթացքում (մեծ հզորության կայանի կառուցում՝ ավելցուկային էլեկտրաէներգիայի հնարավոր վաճառքով): Բացի այդ Սպասսկին պատրաստակամություն հայտնեց աշխատանքներ տանել ռադիոակտիվ թափոնների կառավարման ծրագրի իրականացման և պահուստային դիզել-գեներատորային էլեկտրակայանի արդիականացման նախագծի իրականացման ուղղությամբ:

Խորհրդակցության ընթացքում նշվեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունիսի 23-ի 819-Ա որոշմամբ հաստատվել է Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ՇԺԵ-2 փոփոխված (ակտուալիզացված) ծրագիրը՝ միջոցառումների իրականացման նկատմամբ կիրառվող մոտեցումներով և աշխատանքների կատարման ժամկետներով:

Միջոցառման մասնակիցները քննարկեցին ռուս և հայ մասնագետների կողմից կատարված աշխատանքների արդյունքները, ինչպես նաև նախանշեցին կայանի աշխատանքի անվտանգության բարձրացմանն ուղղված հետագա քայլերը: Կողմերը նշեցին նաև, որ համաձայն շրջանակային պայմանագրի, համատեղ ջանքերով ապահովվում է ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ՇԺԵ-2 նախագծի ընթացիկ աշխատանքների իրականացումը՝ հաստատված ժամանակացույցին համապատասխան: Քննարկվեցին ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ՇԺԵ-2 նախագծի շրջանակներում միջոցառումների իրականացման 2026 թվականի պլանները, ինչպես նաև համատեղ գործակցության հեռանկարային ուղղություններն ու խնդիրները:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀԿ 3-րդ նիստի ընթացքում, հաշվի առնելով կայացած քննարկումները, ընդունվել են ստորև բերված որոշումները.

1. Մինչև 2025թ. սեպտեմբերի 15-ը «Ռոսատոմ Սերվիս» ԲԸ-ն և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն կդիտարկեն ճառագայթաակտիվ թափոնների անվտանգ կառավարման ուղղությամբ նախագծերի բոլոր ասպեկտների մանրամասն վերլուծության նպատակով (շահագրգռված կազմակերպությունների ներգրավմամբ) աշխատանքային խմբի ստեղծման հնարավորությունը:
2. Մինչև 2025թ. սեպտեմբերի 15-ը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն կտեղեկացնի «Ռոսատոմ Սերվիս» ընկերությանը պահուստային դիզել-գեներատորային էլեկտրակայանի արդիականացման նախագծի իրականացման համար «Կոլոմենսկի զավոդ» ընկերության սարքավորումներն օգտագործելու պատրաստականության վերաբերյալ:
3. Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն կդիտարկի ՇԺԵ-2-ի շրջանակներում մշակվող փաստաթղթերի անկախ փորձաքննության (վերլուծության և գնահատման) իրականացման համար «ՄՌԱ ԳՏԿ» ԴԲՀ (ՓԵՄ “НТЦ ЯРБ”) ներգրավման պայմանագիր կնքելու նպատակահարմարությունը (առանց Շրջանակային պայմանագրի սահմանային արժեքի ավելացման):
4. Մինչև 2025թ. սեպտեմբերի 30-ը «Ռոսատոմ Սերվիս» ԲԸ-ն «ՄՌԱ ԳՏԿ» ԴԲՀ-ի ներգրավմամբ կպատրաստի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի համաձայնեցմանը կներկայացնի 4-րդ կետի համաձայն ծառայությունների մատուցման տեխնիկական առաջադրանք (3-րդ կետի վերաբերյալ դրական որոշման դեպքում):
5. Մինչև 2025թ. սեպտեմբերի 30-ը ՀԱԷԿ» ՓԲԸ-ն և «Ռոսատոմ Սերվիս» ԲԸ-ն կիրականացնեն ՇԺԵ-2-ի աշխատանքների ժամանակացույցների սինքրոնացում (համաժամանակացում), և ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե կներկայացվի տեղեկատվություն՝ ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ՇԺԵ-2 ակտուալիզացված ծրագրին աշխատանքների ժամանակացույցների համապատասխանության վերաբերյալ:

9. **<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>**

Ներկայացված առաջարկներն ամփոփվեցին արձանագրությամբ (Արձանագրություն՝ Հայկական ատոմային էլեկտրակայանի թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման նախագծի կոորդինացման և իրականացման վերահսկման համատեղ համակարգման կոմիտեի 3-րդ նիստի վերաբերյալ): Սահմանվեցին համապատասխան ժամկետներ, և նշանակվեցին կատարման պատասխանատուներ: ՀՀԿ-ի հերթական 3-րդ նիստի անցկացումը ևս մեկ անգամ արձանագրեց երկու կողմերի պատասխանատվության շրջանակները:

Միջոցառումն անցավ գործընկերային և բարենպաստ մթնոլորտում, կողմերը տրամադրված էին կառուցողականորեն:

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյան